Հաշվետվություն

2023 թվականի դեկտեմբերի 5-7-ը Բելգիայի Թագավորություն, (Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելգիայի Թագավորություն, Բրյուսել, 2023 թվականի դեկտեմբերի 5-7-ը

3. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիա

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կառավարման խորհրդի նիստին

5. **Քննարկված թեմաները.**
   Նիստի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.
   - ասոցիացիայի ֆինանսական հաշվետվությունը,
   - հիմնական կատարողականի ցուցանիշները, ռիսկերի ռեեստրը,
   - ասոցիացիայի 2023 թվականի տարեկան հաշվետվությունը,
   - 2024 թվականի գործառնական պլանի և բյուջեի հաստատումը,
   - անդամակցության ռազմավարության թարմացված տարբերակը,
   - «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) նախագծին, Կայունության պլանին և 2024 թվականի կառավարման խորհրդի նիստի անցկացման ժամկետներին ու ձևաչափին առնչվող հարցեր:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**
   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կառավարման խորհրդի նիստի օրակարգի համաձայն՝ անդրադարձ կատարվեց 2023 թվականին ասոցիացիայի շրջանակներում կատարված աշխատանքներին, կարևորվեց անդամ երկրների քարտեզագրական և գեոդեզիական մարմինների ներգրավվածությունը ոլորտային միջոցառումներին ու ծրագրերին: Ներկայացվեց 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունը և տարեվերջի կանխատեսված արդյունքները: Քննարկվեց ռիսկերի գործոնը՝ ասոցիացիայի երկարաժամկետ կայունության ու ֆինանսական անվտանգության

տեսանկյունից, որն ազդում է ասոցիացիայի բաժանորդագրությունից ստացված եկամտի կորստի վրա և հիմնականում կախված է ԵՄ ֆինանսավորման և/կամ պայմանագրերի կորստից կամ գնաճի հետևանքներից: Բացի ֆինանսական ռիսկից՝ նշվեց ասոցիացիայի հեղինակային և անդամակցության ռիսկերի մասին: Ներկայացվեցին 2024 թվականի գործառնական պլանը և բյուջեն, որը հաջողված էր «Բաց քարտեզներ Եվրոպայի համար» նախագծի փակումով, «Բաց քարտեզներ Եվրոպայի համար-2» նախագծի մեկնարկով և Եվրոստատի ու Եվրոպական տնտեսական տարածքի հիմնական ռազմավարական գործընկերների հետ նոր պայմանագրերի կնքումով: Կարևորվեց ասոցիացիայի գլխամասային գրասենյակի թիմի նոր կառուցվածքը, որը ձևավորվել է ասոցիացիայի նոր ռազմավարական ուղղությունները զարգացնելու, ռեսուրսները արդյունավետ օգտագործելու համար, ինչպես նաև ասոցիացիային անդամակցելու առավելությունները ներկայացնելու համար: Այնուհետև խոսվեց անդամակցության ռազմավարության մասին՝ կարևորելով նոր գործընկերների մուտքը «Եվրոգեոգրաֆիքս»:

Ներկայացվեցին «Բաց քարտեզներ Եվրոպայի համար-2» նախագծի վերջին թարմացումները, նպատակակետն ու նախատիպը: Կայունության տեսանկյունից ընդգծվեցին գործողությունների ծրագիրն ու երկարաժամկետ ֆինանսական կանխատեսումները՝ առանձնակի շեշտելով, որ «Եվրոգեոգրաֆիքս»-ի տեսլականն է ունենալ հասարակություն, որը կհզորանա իր անդամների վստահելի երկրատարածական տվյալների կիրառմամբ: Խորհրդի անդամները քննարկեցին մի շարք աշխատանքային և կազմակերպչական հարցեր:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2024 թվականի փետրվարի 22-ին անցկացնելու կառավարման խորհրդի առցանց հանդիպում, իսկ մարտի 17-ին Իսպանիայի Թագավորության Սևիլյա քաղաքում անցկացնելու գլխավոր ասամբլեան:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվեց շարունակել սերտ համագործակցությունը ասոցիացիայի շրջանակներում՝ մասնավորապես շեշտը դնելով անդամների գիտելիքների փոխանակման, ներկայացուցչության և տվյալների գործունեության վրա:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 11.12.2023 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման

Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 13.11.2023թ. N 1141-Ա որոշում

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար

4 Գործուղման վայրը Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)

5 Գործուղման ժամկետները 05.12.2023-07.12.2023թթ.

6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2023 թվականի (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս	Սուրեն Թովմասյան	
	Ավիաճառայության արժեք (դրամ)	446,000.00	446.00
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) EUR	159	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	69,870.96	69.87
	Օրերի քանակ	2	
	Ընդամենը (դրամ)	139,741.92	139.74
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) EUR	115	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	50,535.60	
	Օրերի քանակ	3	
	Ընդամենը (դրամ)	151,606.80	151.61
Ընդամենը ծախսեր (դրամ)			737.35

Գլխավոր քարտուղար Մհեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
12.12.2023թ.